



ԱՐԱՔՍ

آراکس

Է ՏԱՐԻ ԹԻՎ. 53 ՓԵՏՐ. ՄԱՐՏ 1993

ՀԱՏԱՎԱՆՈՒ 400 դիալ

ՖԱՐՎԱՐԳԻՆ 1372





ماهنامه آراکس
 فرهنگی، اجتماعی، ادبی
 زیر نظر: یعقوب گریگوریان
 آدرس: ایران، تهران
 صندوق پستی ۱۶۷۶۵/۱۳۳۶
 چاپ: هاشمیون

ԱՐԱՔՍ
 գրական, սոցիո-թուքին
 ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ
 ԱՄՍԱԹԵՐԹ
 ԱՐՏՈՆԱՏԵՐ
 ՀԱԿՈՐ ԳԵԳՈՐՅԱՆ
 ՀԱՍՑՆԵՓՈՍԱՐԿՂ
 16765-1336
 ԹԵՀՐԱՆ, ԻՐԱՆ

ARAX MONTHLY
 P.O. BOX 16765-1336
 TEHRAN, IRAN

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԽՈՍՔ

Սիավասիկ նորից փետրվար ամիս:
 Ամիս Պայլարի ու Վերադարձի:
 Պայլար հանուն Արցախի ազատագրության
 եւ Հայաստան-դեռության ստեղծման:
 Բոլոր վերիվայրումներով հանդերձ, մեկ
 օրի եւս ավելացավ Ղարաբաղյան եւ
 Հայաստանի ազատագրական շարժման
 ժամանակը:
 Թող փետրվարը հիշեցնի մեզ Արցախն ու
 Հայաստանը եւ երբեք չմոռանալ նրանց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷՋ

- ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՍՈՒԹՈՎ.....	3
- ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐԵՐՆ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ.....	4
- ՈՆՊՈՐՏԱԺ ՀԱՍԵՐԳՍԱՐԱՀԻՑ.....	5
- ԱՍՈՒԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐԱՄԱՍԱՐ ՎԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ՀԵՏ.....	10
- ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԷՂԻԿ ԳԵՐՄԱՆԻԿԻ ՀԵՏ.....	12
- ԹԵՀՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.....	13
- ՂԵՍԻՑ-ՂԵՆԻՑ.....	15
- ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՒԱՅԻՆ.....	17
- ՆԱՄԱԿԱՆԻ.....	18
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	19
- ԱԶԱՏ ԲԵՄ.....	21
- ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱԹՈՒՆԻԹՅԱՆ 14-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԻ ՍՈՒԹՈՎ.....	22
- ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.....	24

ՀԱՎԵԼՎԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ԷՋ

صفحه

فهرست مطالب

۲.....	پارلمان ترکیه و روابط با ارمنستان
۴.....	آثار امام خمینی به زبان ارمنی
	(رستم و سهراب) ارزشمندترین اثر ارگستر سمفونیک ایروان
۴.....	به افتخار ملت مسلمان ایران اجرا شد
۵.....	نگاهی به نشریات داخلی

ԻՐԱՆԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԷՂԻԿ ԳԵՐՄԱՆԻԿԻ ՅԵՏ


Մեր համայնքը հիրավի իրեն հպարտ պիտի զգա իր տաղանդավոր եւ շնորհաշատ զավակների ներկայութեամբ: Հպարտ պիտի զգա շնորհիվ նրանց, ովքեր թեեւ ամեն օր բախվում են կենցաղային մանր դժվարութիւնների հետ, սակայն այս բոլորը մեծահոգաբար կրելով հանդերձ իրենք մանրութեւն չեն դառնում...

Այս եւ նման հոգեվաճճների նպատակը նրանց արժեւորելը չէ. ոչ, «Արաքս»ը աղպիսի նպատակ չի հետապնդում: Մենք նպատակ ունենք համայնքիս մտավորական կամ արհեստավոր, արվեստագետ կամ ուսանող եւ առհասարակ բոլոր բնագավառների արժանի անձանց ծանոթացնելով վեր բարձրացնել համայնքիս հավաքական կերպարը եւ նպատակը վերջինիս բարգաւաճմանը:

Սովորական մերթ ընդ մերթ էլ արտառոց վարքերով դպրոցական աշակերտ էր էղիկը: Հայրը հայկական դպրոցի ծառայող էր: Շատերի պէս վաղ հասակից նյութական դժվարութիւնների պատճառով էղիկը զրկվեց ազգային դպրոց հաճախելու հնարավորութիւնից, իրականում էղիկի ընտանիքի կենցաղային պայմաններն ավելի բարդ էին քան մյուսներին: Սակայն ոչինչը չէր կարողանում կանխել պատանի էղիկի ուսման տենչը: Կարդում էր, գրում, ջնջում... (Թեեւ թատինի փոխարեն օգտագործում էր սեփական թատինե ոտնամանները...)

Դեռ պատանի հասակում 7 անգամ սերտեց Ավետարանը (գոյցե «վերին ճշմարտութեան» նկատմամբ ծախսվել հագեցնելու համար). այնուհետեւ ծանոթացավ ամենատարբեր բնագավառի գիտութիւնների հետ եւ խորացավ դրանց մեջ:

1354 (1975) թվին բարձրագույն ուսման ընդունելութեան քննութիւնների արդյունքները հետաքրքիր էին նաեւ նրանով, որ ավելի քան 25 ճյուղերում ընդունվել էր եւ մի քանի ճյուղերում առաջնութիւն էր շահել «ոմն» էղիկ Բաղդասարյանը: Սակայն հանրութեան լայն խավերը այս տաղանդավոր, զուսպ ու համեստ հայորդու հետ ծանոթացավ Իսլամական Հեղափոխութեան հետո, երբ լույս աշխարհ եկավ նրա անդրանիկ ծավալուն թարգմանութիւնը «Ընթերցողների սեղանին դրվեց Հայ ժողովրդի պատմութեան պարսկերեն թարգմանութիւնը: Նրանից հետո լույս տեսան նրա «Հայ Մշակույթի ողնաշարը գործիչները» (امداداران فرهنگ ارمنى) «Հայերը» (ارمنیان) «Նոր Զուղայի գեղանկարչութիւնը» (نقاشی جلفای اصفهان) եւ այլ թարգմանութիւնները: Ինչպէս նաեւ «Հայե-



րեն սովորենք» (ارمنى بياومزيم) հեղինակային արժեքավոր աշխատութիւնը:

Այս տաղանդավոր հետազոտողի եւ անհանգիստ հոգու տեր երիտասարդի հետ մեր առաջին կենդանի շփումը կայացավ այնժամանակ երբ նա բանախոսում էր «Թեհրանահայութեան պատմութիւնը» թե մայով: Այս թանկարժեք աշխատութիւնը միայն մի մասն է նրա ծավալուն, բազմահատոր «Իրանահայութեան պատմութիւնը» գրքի: Ինչպէս նա նշում է նախաբանում 1368 թվին (1989) իրանագիտական շրջանակը պիտի տոնէր Թեհրանի հիմնադրման 200 ամյակը եւ դիմում է այս բնագավառում գիտակի համբավ ունեցող է. Գերմանիկին: Ներկայացնելու նաեւ «Թեհրանահայութեան համառոտ պատմութիւնը»: Ի դեպ նշենք, որ պարսիկ գիտնականները իրանահայութեան եւ առհասարակ հայ մշակույթի ու պատմութեան մասին հարցերի հանդիպելիս շատ դեպքերում դիմում են է. Գերմանիկին: Նրա ավելի քան մեկ-երկու տասնյակ հոգեվաճճների առանցքը իրեն ուղղված հարցերին պատասխաններն են: Այդպիսի հարցումով նրան են դիմել այնպիսի հայտնի գիտնականներ ինչպիսիք են դոկտ. Մորթեզա Ֆարհադին, Ֆիրուզ Մանսուրին, Իրազ Գուէստիին, դոկտ. Իրազ Վամեդին, դոկտ. Մոհամադ Ալի Սաջադին եւ այլն: Իսկ էղիկը յուրաքանչյուրին պատասխանում է առանձին բարեխղճութեամբ ու բժախնդրութեամբ... Սա է պատճառը, որ օր-օրի աճել է նրա գիտնականի համբավը եւ մասնավորապէս նրան է վստահված պարսից «Երիտասարդաց հանրագիտարանի» «Հայերը» հոդվածի պատրաստելը:



Թեև էդիկը զբաղվել է ամենատարբեր բնագավառի հարցերի ուսումնասիրությամբ՝ պատմության, երաժշտության, գրականության, ճարտարապետության եւ այլն, բայց նրա առաջին նախասիրություններից է լեզվաբանությունը (նրա անձնական գրադարանի ավելի քան 3000 գրքերից մոտ 500-ը բառարաններ են)։ Նա դեռ իններորդ դասարանում ձեռնամուխ եղավ մի ինքնատիպ բառարանի կազմավորմանը...

Այնուհետեւ զբաղվելով հետազոտական աշխատանքով, զուգահեռաբար թարգմանչական մեծ գործ է կատարել նա։ Դեռ ուսանողական տարիներին պարսկերենի է թարգմանել «Կոմիտասի կյանքն ու գործը» (Մ. Մուրադյան), «Հայ պարսկական բարեկամությունը» (քաջ. Հաճյան) եւ այլ գործեր, խմբագրել՝ Խորեն Տ. Վրուրյանի «Ինչպե՞ս տեսա Հայաստանը» հուշագրությունը։ Այդ նույն տարիներին համընթաց ուսմանը աշխատում էր արդեն էդիկը, եւ իր օտարազգի գործակիցների հետաքրքրությանը հագուրդ տալու ուղղությամբ պատրաստեց (անգլերենով) «Իրանահայ մշակույթի ականավոր դեմքերը» աշխատությունը, անգլերենի թարգմանեց իրանահայ բանաստեղծների մի քանի գործեր, ինչպես նաեւ Իսահակյան, Շահազիզ, նաեւ Թումանյանի «Գիքորը» (1354-1975 թ.)։ Ի դեպ նշենք, որ նա մայրենի, պարսկերեն եւ անգլերեն լեզուներից բացի լավածանոթ է՝ ֆրանսերեն, գերմաներեն եւ իտալերեն լեզուներին։

էդիկի աշխատություններում առանձին տեղ է զբաղեցնում իրանագիտությունը, եւ նրա սկզբնական աշխատանքներից է համառոտ, բայց արժեքավոր «Իրանագիտությունը հայկական աղբյուրներում» ծավալուն հոդվածը։ Հրատարակել է հոդվածներ (انسان و فرهنگ ایران) (Իրանի մշակույթի հանդես) պարբերականի էջերում։

Վերոհիշյալը էդիկ Բաղդասարյանի աշխատությունների միայն մի մասն է։ ... Եւր խոսում ես նրա

հետ, ինքն էլ չի հիշում իր գործերը ամբողջությամբ։ Նրա հայացքը դեպի ապագան է ուղղված, իր նվաճած գիտական վաստակը բնավ իրեն չի բավարարում։

Նա այժմ ձեռքի տակ ունի երեք թանկարժեք աշխատություններ, որոնցից առաջինը «Իրանահայության պատմությունն» է, իսկ մյուսը հայ-պարսկերեն բառարանը, եւ երրորդը հայ գրականության պատմության պարսկերենի թարգմանությունը, երեքըն էլ ծանրակշիռ եւ ծավալուն աշխատություններ։

Ինչպես իրավացիորեն նկատում է ընթերցողը աշխատանքը էդիկի տարերքն է, հենց այդպես էլ նա կամա թե կկամա ներքաշվում է տարբեր աշխատանքներում, օրինակ՝ Մանիա Ղազարյանի «Նոր Զուղայի գեղանկարչությունը» թարգմանելիս նա խորացավ նաեւ այս բնագավառում, անգամներ ճամփորդեց Նոր Զուղա՝ Գլքում հիշատակված փաստարկները անձամբ ուսումնասիրելու եւ ստուգելու... ավելի ուշ արվեստի այս հարցով ցուցումներ ստանալու խնդրանքով նրան դիմեցին այդ բնագավառի ուսանողներ եւ ... որպես այս գործի գիտակ շուտով ընդգրկվեց համալսարանի այս ճյուղի քննող ժողովի կազմում...

Եւ վերոհիշյալ բոլոր նշումները դեռ նրա բուն մասնագիտությանը չառնչվող նրա «կողմնակի զբաղմունքներն» են...

Հաշվիչ տեխնիկայի եւ հատկապես ծրագրավորման բաժնի հմուտ ինժեները հեղինակել եւ թարգմանել է մոտ երկու տասնյակ մասնագիտական գրքեր...

Երիտասարդ հետազոտողը ստացել է հրավերներ Հայաստանի Հ Գիտությունների Ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտից, ինչպես նաեւ ՀՀ Պատմության թանգարանից՝ Հայաստանի այցելելու, բայց նա դեռ անհարմար է զգում «ձեռնունայն» հայրենիք մեկնելը։

Թեհրանահայության պատմությունը

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

Ուրախությամբ հրատարակում ենք իրանահայ անխոնջ հետազոտող եւ թարգմանիչ Էդիկ Բաղդասարյանի (Է. Գերմանիկ) «Թեհրանահայության պատմությունը» մեծարժեք աշխատությունը որը բաղկացած է հետևյալ գլուխներից, եւ «Արախը» ամբողջ նյութը կհրատարակի մաս առ մաս։

«Թեհրանահայության պատմությունը» լինելով հեղինակի «Իրանահայության պատմություն» ծավալուն աշխատանքի մի մասը ի սկզբանե պատրաստվել է ինչորիմաստով շտապ կերպով, քանի որ այն շուտով պիտի լույս տեսներ Թեհրանի 200-ամյակին նվիրված մի հա-

մապարփակ աշխատության մեջ 1368թ.(1988)։ Մյուս կողմից այս հանգամանքի պատճառով նյութը պատրաստված է խիստ ամփոփված (ընդամենը 10 էջի սահմաններում)։

Հեղինակը նյութը պատրաստելիս օգտագործել է ավելի քան 35 անուն գրքեր, բազմաթիվ պարբերականներ, ինչպես նաեւ կենդանի անձանց հարցազրույցները։ Բայց եւ բնավ չի հավակնում, նյութի ամբողջական եւ անթերի լինելուն, եւ խնդրում է ընթերցասեր հասարակությանը նկատելի թերությունների ու



սեփական լրացումների մասին տեղիակ պահել հեղինակին:

Բովանդակություն

- 1-Նախաբան
- 2-Հայերի հիմնավորվելը Թեհրանում
- 3-Հայերի ֆաղափական դերակատարությունը Իրանի կյանքում, ֆաղափական եւ գիմվորական դեմքեր
- 4-Հայկական միություններ ասիանադրական հեղափոխության ընթացքում
- 5-Հայաստանի դեսպանությունը Թեհրանում
- 6-Հայերի դերակատարությունը տնտեսության մշակույթի բնագավառում
- 7-Մշակույթ
- 7-1 Դպրոցները
- 7-2 Գրականությունը, արվեստը, գիտությունը
- 7-3 Գրադարանները
- 7-4 Մշակութային միությունները
- 7-5 Հրատարակչությունները
- 7-6 Տպարանները
- 7-7 Կրոնական աղանդները
- 7-8 Թեհրանի հայ եկեղեցիները

ԱՎԵՍՏԱՐԿ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մինչ թեհրանահայության պատմությանն անդրադառնալը հարկավոր է հակիրճ վերհիշել իրանահայության պատմությունը: Հաշվի առնելով միջազգային այժմյան սահմանները, պիտի նշել, որ հայկական առաջին խմբավորումները որպես գիմվորական ջոկատներ իրանում հաստատվել են Աֆեմենյան (مخامنه) իշխանության օրոք (4-րդ դար Մ.թ.ա.):

Այս շրջանում իրենց աշխատանքի բերմամբ արդեն իրանում էին գտնվում որոշ առևտրականներ ու արհեստագործներ: Հայերը որպես բնիկներ ապրում էին իրանի Ատրպատական կամ Երեմինի պարսկահայ մահաճում (Թավրիզ, Մարանդ, Ռոմիա (Կապուտան), Նոյ (հեր), Մարաղա, Մալմաստ (Ջարեվեղ), Մաֆու (Արտազ), Ղարաղաղ (Փայտակարան) եւ այլն:

Հայերի առաջին մեծ զաղթը դեպի Իրան եղել է մեր թվարկության երրորդ հարյուրամյակում Մասանյան Արտաշեսի (ارتاشیر ساسانی) օրոք, իսկ հաջորդ 4-րդ դարում Շապուհի Բ-ի (شاپور دوم) օրոք: Գաղթականները մեծ մասամբ հաստատվեցին Նուգեստանում եւ երկրի հարավ արեւմտյան մասերում:

Հայերի զաղթը դեպի Իրան ավելի ուժեղացավ թուրք Սելջուկների եւ Մոնղոլների արշավանքների օրոք:

Նոր շրջանում 1604-1605 թթ. Շահ-Աբբաս Ա-ն կազմակերպեց մոտ 300 հազար հայեր (ըստ որոշ աղբյուրների 500 հազար հայերի) զաղթը դեպի Իրան: Դրա հիմնական դրդառիթմերը ռազմական, տնտեսական եւ ֆաղափական խնդիրներն էին եւ տեղեկավորվում էր այս մարդու մի օգտագործելով արմատական բարեփոխությունների ենթարկել երկրի տնտեսությունը, արհեստը, ներքին եւ արտաքին առևտուրը եւ այլն:

Այս շրջանի գաղթականները հիմնականում հաստատվեցին երկրի կենտրոնական շրջաններում եւ Իսֆահանի մերձակա՝ Նոր Ջուղայում:

Հայ առևտրականները աշխատում էին Ֆրանսիա, Անգլիա, Հոլանդիա, Թուրքիա, Ժենովա, Ռուսաստան եւ Հնդկաստան երկրների հետ, իսկ արհեստավորները հիմնականում զբաղված էին ոսկերչությամբ, ակնագործությամբ, զինագործությամբ եւ տաղձագործությամբ: Շատ հայեր զբաղվեցին խորհրդակցական, թարգմանչական եւ գիմվորական բնագավառների աշ-

խատանքներով: 17-րդ դարի 70-ական եւ 80-ական թթ. սկսվեց եւ մինչեւ 18-րդ դարը շարունակվեց հայերի զաղթը դեպի երոպական եւ ասիական երկրներ (հատկապես Հնդկաստան): Փոխադարձաբար Իրանից Հայաստան հայերի մեծ ներգաղթը տեղի ունեցավ Թուրքմենչայի պայմանագրի կնքմամբ: 1828-1830 թթ. մոտ 45 հազար հայեր վերադարձան Երեւան եւ Նախիջևան մահաճումներ:

Իրանում 19-րդ դարից սկսած բարելավվեց հայերի վիճակը եւ նրանք ստացան բարձր պաշտոններ ստանձնելու իրավունք: Այս շրջանի հայտնի դեմքերից են Միրզա Մեյլիմ խանը, Հովհաննես Մասեհյանը, Հովհաննես խան Ալեքսյանը, Մեթ խան Աստվածատուրը, Ենիկոյազյան ընտանիքը, Դավիթ խան Դավթյանը, թնդանոթային գորահրամանատար Ջոհրաբյանը, Թորաբխան կամ Թաղեոս Առաքելյանը իր գավազներով համդերձ, Ստեփան եւ Տիգրան Բաժախյանները (որոնք պալատի ոսկերիչներն էին), Հովհաննես Դազարյանը (որ պալատի մուշտակագործն էր), դոկտ. Դավիթխան Մկրտչյանը եւ գավազները՝ Սողոմոն ու Հունամը, վիրաբույժ Կարապետ Աբրահամյանը եւ շատ ուրիշներ:

Իրանի հայ բնակչության թիվը 1851 թվին 20 հազար էր, 1890-ին՝ մոտ 80 հազար, եւ 1978-ին մոտ 200 հազար:

Հայերի հասարակական շերտավորումը այլազան է կան խոշոր առևտրականներ ու գործարանատերեր, կան արհեստավորներ ու խանութբաններ, կան մտավորականներ ու արվեստագետներ, համայնաբանավարտներ ու ուսանողներ: Համայնաբանականները հիմնականում բժիշկներ, ինժեներներ, ուսուցիչներ եւ պետական ու սեփական հիմնարկների ծառայողներ են: Համայնքը ղեկավարվում է թեմական խորհուրդների միջոցով: Եւ պետությունը իրավականորեն հաստատում է նրանց գործունեությունը հայերի ներհամայնքային որոշ հարցերի ընտանեական, մկրտության, պատկի, ապահարգանքի, ժառանգության եւ այլ կարգավորման խնդրում:

Մինչ 1956 թվականը Իրանահայ եկեղեցին կապվում էր Մալո Աթոռ Մուրթ Էքմիածին, սակայն այդ թվից Իրանում տեղի ունեցած որոշ ֆաղափական անցուղարձերի ազդեցությամբ եւ հետեւանով իրանահայ եկեղեցին կապվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը:

Իրանում կան 3 թեմական խորհուրդներ՝ ա-Ատրպատականի թեմը Թավրիզ կենտրոնով, որի ենթակայության է պատկանում 57 եկեղեցիներ:

բ-Թեհրանի թեմը, որի ենթակայության են պատկանում 8 եկեղեցիներ.

գ-Հարավային Իրանի եւ Հնդկաստանի թեմը, որի ենթակայության են պատկանում 21 եկեղեցիներ. Բացի հիշյալներից գործում են նաեւ Հայ Կաթողիկե եւ Հայ Ավետարանական եկեղեցիները, հայերում կան նաեւ այլ փոքրաթիվ անդամներով կրոնական աղանդներ:

Իրանահայ ամենահին միություններն են՝ Հայ բարեգործական ընդհանուր միությունը (1931 թ.),

Հայ մշակութային Արարատ կազմակերպությունը (1941 թ.), Հայ Մշակութային միությունը (1942 թ.),

Իրանում կան մոտ 40 հայկական դպրոցներ: 1936 թվին ի հետեւումն Ռեզաշահի պանիրանիստական ֆաղափականության հետեւանով փակվեցին հայկական դպրոցները, իսկ վերաբացվելուց հետո (1941-1943 թթ.), բոլոր դասերը բացի հայոց լեզուն ու գրականությունը, հայոց պատմությունն ու կրոնը դասավանդվում էին պարսկերենով: Իրանի իսլամական հեղափոխությունից հետո կոճատվեցին հայերենով դասավանդվող

Հայաստանի նախագահին շնորհված այս դա...
հավասարակշռելու համար, Թուրքիայի Կազի հ...
սարանի ղեկավարությունը որոշեց իր կարգին
դոկտորայի կոչում սալ, Ադրբեջանի նա...
Արուխազլ Էլչիբեյին:

□□□

Երեւանի Թերթերի Տպաւ

Թերթի սարածման «Հայ Մամուլ»
սնորեն Ռուբեն Միրոյանի տեղեկաւ...
1993 (1371) թվականին Երեւանի...
սղախանակն է. «Երկիր» 30 հա...
զար, «Ոգնի» 20 հազար, «Հ...
սութուն» եւ «Հայ» 10 հազ...
զար, «Երեկոյան Երեւան»...
Կին» 12 հազար, «Ազատ»...
քաժանորդների տեսակետի...
առաջնությունը դասկա...
դաստնաւորք «Հայ»...
որից հետո գալիս...
«Դարձրություն»ը եւ...
առնված Մախիս Երեւան:

Վերադարձ

«Հայրենի»
Մշակութա...
ուրջ մեկ...
տեղը գի...
«Հայր»...
Երեւան...
վա...
20...

...հաստատված էր վերահիշյալ ծրագիրը նույնութ...
...ներ մասն «Դասեն Ֆաջր»ի ստիքով, բայց
...ի ստղ լայնամանեւում չիրականացվեց:

□□□

...հաւայ համայնքում մեծ սաձա...
...այ» անկախ ռադիոկայանի
...մղում աւխտաւանը:
...երկով «Ռադիո հայ»ի
...եւ հարստութուն է
...ո իրենց սանձնած

...յան» գործակալության
...ությունների ակադեմիայի
...ուսի արեւելայան քանակաւ...
...դասնական գիտությունների
...ասրյանը, քաժինը հրատարակ...
...ոլ Իրանի իսլամական հեղափո...
...դ հանգուցյալ Իմամ Խոմէյնիի
...եղծությունների ժողովածուի հայերեն
...ը: «Հանգուցյալ Իմամը մեզանում
...սցառաւորեւ որդեւ քաղաքական եւ
...ործիչ, սակայն այս ժողովածուում մա...
...ման որդեւ հմուտ քանտեսելով, իրանական
...դության լավագույն տվանդների շարունակող:
...եւ, ժողովածուի հրատարակումը կցառնա...
...անական քաղաքական ծախսութային կապերի
...նշանակալի երեւոյթ», -ասաց Գ.առնիկ
...սրյանը: Ժողովածուն քաղաքական է, քանտարական
...ությունների թեկնածու Հայր Մովսիսյանը, խմբա...
...րել եւ տղագրության դաստատել Գ.առնիկ
...սասրյանը: Տղագրությունը կիրականացնի «Միխայել
...վարանդյան» հրատարակչական-տղագրական ձեւմու...
...կությունը:

□□□

14 →

առարկաների դաստատմերը, իսկ այժմ տարրական դըպ...
րոցներում դաստվանդվում են հալոց լեզու եւ կրոն:

Իսթահանի համալսարանում կան հալազիտական
դասընթացներ: («Թեհրան» համալսարանում այժմ հա...
լազիտական դասընթացներ չկան):

Իրանահայ առաջին թերթերն են եղել «Շարժումը» եւ
«Շափիղը», որոնք հրատարակվել են 1894 թվին թեհ...
րանում, եւ մինչ այժմ ավելի քան 100 ամուն թերթեր
են հրատարակվել Իրանում:

Հայերը 1905-1911 թթ. Սահմանադրական հեղափո...
խությունից հետո իրանի խորհրդարանում ունեն երկու
ներկայացուցիչներ:

Իրանահայ պատմության վերջին շրջանի Հանաչված
ղեմներից են աստղագետ Ալեկուշ Տերյանը, քանաս...
տեղծներ Դեվը (Մարգար Ղարաբեգյան), Գալուստ
Խանենը, գրականագետ Արա Հովհաննիսյանը, դերա...
սան Մանվել Մարությանը, ինժեներ Պապիկ Թովմաս...
յանը, ռեժիսորներ Հարսիկ Թաճրագյանը, Մամվել
Խաչիկյանը, Արամայիս Աղամալյանն ու Արքի Հովհան...
նիսյանը եւ շատ ու շատ ուրիշներ:

Շարունակությունը հաջորդ համարում



ողջույնի խոսում եղեւում է, որ քոյուր քիստոնյաները
ազատեւն աղում են Իրանի մուսուլման ժողովրդի
հետ կողմ-կողմի որդեւ քոյուր եւ եղբայրներ,
դաւաղանելով իրենց լեզուն եւ կրոնը:

Թեհրանահայության պատմությունը (2)

(Շար. նախորդ համարից)

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

Թեհրանահայ համայնքի կազմավորումը հավանաբար սկսվել է 18-րդ դարի վերջերից, երբ Քարիմ-խան Ջանդը նոր Ջուղայից 10 քաղաք (ըստ որոշ աղբյուրների՝ ակնագործ) ընտանիքների բերեց Թեհրան եւ բնակեցրեց Թեհրանի արվարձաններից՝ Դուլաբ գյուղում (որտեղ գտնվում է թեհրանահայության ամենահին գերեզմանատունը)։ Իսկ մինչեւ դա եթե Թեհրանում եղել են հայեր, ապա դրանք եղել են ճամփորդներ, կամ ժամանակավոր աշխատանքով այստեղ գտնվող անձիք։

Թեհրանում հայկական առաջին եկեղեցին՝ Ս. Թադեոս-Քարդուղիմեոսը հիմնվել է 1147թ. (1768) «Քուշե Արամանե»-ում («Գոգար Ղարիբան» եւ «Քաղաքե Հազրաթ Աբդուլազիմ»-ի միջատարածում)։

1174 թվին (1795) Աղա-Մոհամեդ-խան Ղաջարը Հայաստանից մի խումբ գերիներ բերեց Թեհրան։

Ղարաբաղից այստեղ գաղթեցրեց նաեւ 5 հայ ընտանիքների եւ բնակեցրեց Դարվազե-Ղազվինի շրջանում։

Այստեղ էին ապրում նաեւ երկու թիֆլիսահայ ընտանիքներ՝ Հովսեփյան եւ Ստեփանյան ազգանուններով։ Այս թաղամասում հնուց եղած փոքրիկ եկեղեցին կառուցվել է վերջիններիս ծախսով։

Հայ գաղթականների հոսքը երկրի տարբեր շրջաններից դեպի Թեհրան սկսվել է 1177թ. (1798) երբ իշխանության հասավ Ֆաթի Ալի Շահ Ղաջարը։ Վերջինիս հրամանով Նոր Ջուղայից եւ Թավրիզից Թեհրան բերվեցին հայ արհեստավորներ, որոնցից շատերը բնակվում էին Դարվազե Ղազվինում։

Շահ Աբդուլ Ազիմում արդեն ապրում էին նաեւ այլ ազգությունների մարդիկ։ Այստեղ գտնվող վերը նշված փոքրիկ եկեղեցու բակում են թաղված Վրաստանի թագածառանգ Ալեքսանդրը եւ նշանավոր այլ անձիք։

1263 թվին (1884) Դարվազե Ղազվինում կառուցվեց Ս. Գեորգ եկեղեցին՝ ինն եկեղեցու տեղը 1169-74 թ. (1790-95))։

Թեհրան քաղաքի զարգացմամբ եւ բարգավաճմամբ եւ դրանում հարաբերական բարվոք պայմանների ստեղծմամբ ողջ երկրից սկսվեց գաղթականների հոսքը դեպի Թեհրան, որից անմաս չէր իրանահայությունը։ Այս երեւույթը ծագեց հատկապես գյուղերի աստիճանաբար ֆայտայման հետեւանում։

Շատ հայեր Թեհրան էին գալիս աշխատանք գտնելու հույսով։ Ըստ հուշագիրների եւ որոշ թերթերի թեհրանահայության թիվը տարբեր տարիներին եղել է հետեւյալը։

1230-ին (1851) 31 հոգի

1236-ին (1857) 551 հոգի

1250-ին (1871) 750 հոգի

1259-ին (1880) 1177 հոգի

1282-ին (1903) 1450 հոգի

1293-ին (1914) 2905 հոգի

1301-ին (1922) 3247 հոգի

1338-ին (1959) 60.000 հոգի

1357-ին (1978) 110.000 հոգի

Բացի բուն Թեհրանից, հայեր են ապրել նաեւ քաղաքի արվարձաններում։ Օրինակ՝ 1277 թվին (1898) Վանաճում ապրում էր 35 ընտանիք։ Այստեղ կար մեկ դպրոց եւ մեկ եկեղեցի։

Վանաճի արեւելքում «Խորդուն»-ում ապրում էր 22 ընտանիք։ Թեհրանի հյուսիս արեւելքում Դարուսում ապրում էր 12 ընտանիք։ Բուժեհենում 11 ընտանիք։ Լաշգարաբ գյուղում՝ 6 ընտանիք։ Թալո գյուղում՝ 7 ընտանիք։ Գյալանդովաբ գյուղում 11 ընտանիք։ Հասանաբադ գյուղում 12 ընտանիք։ Թիղեսթան գյուղում 1 ընտանիք։ Ղոլխաում 2 ընտանիք, Դավուդխեում 4 ընտանիք եւ Մանսուրաբադում 30 ընտանիք։

Դեպի Թեհրան գաղթի բնական պատճառներից բացի, կար նաեւ մի կարեւոր հանգամանք, որի պատճառով ստավել մեծացավ հայերի հոսքը դեպի Թեհրան։

Համաձայն Հայաստանի կառավարության առաջարկության եւ Խ. Միության 1324 թվի (1945 նոյեմբերի 21-ի) որոշման թույլատրվեց 30 հազար հայերի գաղթը Իրանից, Հունաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, Լիբանանից եւ Սիրիայից դեպի Հայաստան։ Այդ թվին հիշյալ երկրների ավելի քան 130 հազար հայեր դիմեցին Հայաստան մեկնելու համար, որոնցից 50 հազարը հաջողեց Հայաստան մեկնել. այդ թվում՝ 20597 հոգի Իրանից։ Գաղթականների առաջին շարասյունը Թեհրանից դեպի Հայաստան շարժվեց 1325 թվին (1946 հունիսի 29-ին)։ 1325 թվին (1947) եւս 35401 եւ 1948-ին մոտ 10.000 հոգի տարբեր երկրներից, այդ թվում եւ Իրանից, Հայաստան գաղթեցին։ Իրանից հետո առկա բազմաթիվ դժվարությունների սլառառով (բնակարանի, աշխատավայրի եւ... անբավարարության) ներգաղթը ժամանակավորապես դադարեցվեց։

Ներգաղթը ստաբեր երկրներում կազմակերպվում էր Հայաստանի կառավարության հատուկ ներկայացուցիչների, երբեմն էլ Խ.Միության դեսպանատուների միջոցով։ Այսպես, 1325 թվին (1946 մարտի 31-ին) այդ նպատակով Թեհրանում կազմվեց «Իրանահայ ներգաղթողներին օժանդակող կենտրոնական կոմիտե»։ Հայաստանի ներկայացուցիչներ՝ Մարտիրոս Մելիքյանը, Ռուբեն Քալանթարյանը եւ Ռուբեն Ղազարյանը եկան Թեհրան։ Իրականում



հենց սրանք էին որ տեղի հայերի հետ միասին կազմավորեցին հիշյալ «կոմիտեան», որի նախագահ էլ ընտրեցին Թեհրանի բարերարներից Ռոման Իսաբեկին: Կոմիտեի այլ անդամներից էին Թեմի առաջնորդ եպիսկոպոս Վահան Կոստանյանը (պատվո նախագահ), Հայկ Գարագաշը (փոխնախագահ), Աշոտ Խանջյանը եւ Ղազար Սիմոնյանը: Կոմիտեն գտնվում էր Նաղերի պողոտայի (այժմ Ջոմհուրի Էսլամի) Հոմայուն փողոցի համար 62-ում:

Այդ թվերին շատ իրանահայեր հատկապես գյուղաբնակներ Հայաստան մեկնելու համար արձանագրվեցին, միայն նրանց թիվը անցնում է երեսուն հազարից: Չնայած որ արդեն հաղորդվել էր, որ մինչ հաջորդ տեղեկագրությունը գյուղացիները չվաճառեն իրենց տունն ու տեղը, բայց մի կողմից ներգաղթի համընդհանուր ոգևորությունը եւ մյուս կողմից տեղի խանութի եւ ֆեռդալների սանձարձակ անարդարությունները հատել էին գյուղացիների համբերությունը, որի հետեւանում էլ նրանք օր առաջ ծախում էին իրենց տունն ու տեղը եւ պատրաստվում Հայաստան մեկնելու: Նրանք շուտով Բուրվարի, Ջափղաղ, Զյազազ, Զյամարա, Չարմահալ, Սուլթան Աբաղ եւ այլ շրջաններից եկան Թեհրան եւ բազմաթիվ դժվարությունների հանդիպելով տեղափոխվեցին Բեհջաթ Աբաղ, Յուսեֆ Աբաղ, Ղեզել Ղալա, Հեշմաթիյե, Մաջիդիյե, Վահիդիյե, Ջաոֆեշ, Նարմաֆ եւ այլ թաղերում: Այս թաղերից կարեւորագույնը Բեհջաթ Աբաղն էր, ուր բնակվում էին 1200 ընտանիքներ, որոնք մոտ 15 երկար ու ձիգ տարիներ աշխատելուց հետո կարողացան մասամբ կարգի բերել իրենց կյանքն ու ապրուստը:

Փողոցներում թափառող երեխաներին տարբեր արտոններից փրկելու համար 1327 թվին (1947 նոյեմբերի 15-ին) տեղի բնակչության ջանքերով Բեհջաթաբադում հիմնվեց Ներսիսյան դպրոցը:

1334 թվին (1955) Թեհրանի ֆաղափապետարանը Բեհջաթ Աբաղի ավերելու հրաման արձակեց եւ դրա բնակչությունը տեղափոխվեց ֆաղափի այլ թաղամասեր:

Ինչպես արդեն նշվեց՝ զանազան դժվարությունների պատճառով 1947 թվից դադարել էր ներգաղթը, սակայն առ ժամանակ նորից ներգաղթը վերսկսվեց: 1330-ական թթ.(1950) մի քանի հարյուր ընտանիքներ ներգաղթի դիմում ներկայացրին: 1340-ական թթ. (1960) համաձայն Իրան-Խ.Միության մի համաձայնագրի Իրանը թույլատրեց այն հայերին, որոնք ցանկանում են փոխել իրենց հայտատվությունը գաղթեն Հայաստան: 1342 թվից (1963) այդ համաձայնագիրը գործադրվում եւ շարունակվում է առ այսօր:

Այժմ Թեհրանահայության թիվը անցնում է հարյուր հազարից: Նրանք հիմնականում բնակվում են Նարմաֆ, Ջարֆեշ, Վահիդիյե, Մաջիդիյե, Հեշմաթիյե, Բախար, Յուսեֆ Աբաղ, Նաղերշահ, Վիլա, Ազիզ խան եւ այլ թաղամասերում:

Շարունակելի

11

Ս

ու

նի

հա

Մի

րե

նա

Հո

իր

մո

վ

գա

յլ

նի

նա

ար

թ

Ն

մը

ս

փի

դո

Ս

իր

ա

ա

հա

Ք

Տա

ն

ե

ա

ր

ա

ր

ա

ր

ի

ն

ա

ր

ա

ր

ա

ր

ա

ր

ա

ր

ա

ր

ա

ր

ն

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ա

ՄԱՄՈՆ ՀՈՎԻԵՄՆ

(-) Տե՛ս, «Իրա՛ն Հոգեւորականը» մեր նախորդ գիրքը, Պէյրոս, 1987, էջ 286:

Թեհրանահայության պատմությունը (3)

(Շար. Նախորդ համարից)

ԷԴԻԿ ԲԱՂԴՍՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

Թեհրանահայության պատմությունը, որը պարբերաբար հրատարակվում է «Արաքսում» քաղաքացիական և առանձին գլուխներից: Ըստ հեղինակի դասակարգման այս համարում պետի հրատարակվել «Հայերի ֆաղափարական դերակատարությունը» և «Հայկական միությունները սահմանադրության շրջանում» բաժինները:

Սակայն այդ բաժինները մենք կկրապարակենք առկա ուշ: Իսկ այս համարում ներկայացնում ենք հերթական հաջորդ բաժինը:

Հայաստանի Դեսպանատունը Թեհրանում

Ռուսաստանի հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Լենինի հրամանով Կովկասից հետ կանչվեց ռուսական բանակը, եւ կովկասյան ճակատը անպաշտպան մնաց թուրքական զորամիավորումների առջեւ:

1918 թվի փետրվարին (1297 թ.) հայ դաշնակցականները, վրացի մենչեիկները եւ ազերի մուսավաթականները Թիֆլիսում կազմեցին Սեյմի կառավարությունը: Նրանք 1918 թվի ապրիլի 22-ին, (1298 թ.) հայտարարեցին Անդրկովկասի անկախությունը եւ սկսեցին բանակցությունները Թուրքիայի հետ: Սակայն Թուրքիայի անընդունելի պահանջների պատճառով այդ բանակցությունները ծախողության մատնվեցին: Հետեւաբար թրքական զորամիավորումները մայիսի 15-ին նոր հարձակում գործելով գրավեցին Ալեքսանդրապոլը (Գյումրի) եւ շարժվեցին դեպի Երեւան:

1918 թվի մայիսի 22-ից 28-ը (1298 թ.) տեղի ունեցան թե՛ մարտեր թրքական զորքերի եւ հայկական զորամիավորումների ու աշխարհագրապիկների միջեւ, որոնք հանգեցին հայկական կողմի բացարձակ հաղթանակին:

Մյուս կողմից դաշնակցականների, մենչեիկների եւ մուսավաթականների միջեւ ծագած ներքին անհամաձայնության պատճառով մայիսի 26-ին պառակտվեց նրանց միությունը: Նույն այս օրը Վրաստանը, հաջորդ օրը Ազրբեյջանը եւ մայիսի 28-ին Հայոց Ազգային Խորհուրդը (որը համարյա դաշնակցական մարմին էր) անկախություն հայտարարեցին:

Այս թվին Արամ Մանուկյանը որպես Հայաստանի կառավարիչ դեսպաններ գործուղեց հարեւան երկրներ եւ Հովսեփ Արղությանն էլ որպես Հայաստանի Հանրապետության դեսպան գործուղվեց Թեհրան:

ՀՀ անդրանիկ դեսպան՝ Հ. Արղությանը 1919 թվի (1299 թ.) դեկտեմբերի 24-ին ժամանեց Էնզելի եւ

1920 թվի (1300 թ.) հունվարի 3-ին հասավ Քեարաջ եւ երկու ինքնաշարժով, որոնք պատկանում էին առեստրական Եղիա Թումանյանին, շարժվեց դեպի Թեհրան:

Հայաստանի դեսպանատունը գտնվում էր Սեփահ պողոտայի վրա՝ (այժմ՝ Էմամ Խոմենի) Մարտիրոսյան Դավթիսանյանի բնակարանին կից: Դեսպանատան ամսական վարձն էր 70 թուման:

Արղությանի պաշտոնավարությունը տեղեց մոտ մեկ ու կես տարի:

1920 թվի (1300 թ.) նոյեմբերի 29-ին ընկավ դաշնակցական կառավարությունը, Հայաստանի իշխանությունը գրավեցին հայ բոլշեիկները, եւ 1921 թվի հունիսի 14-ին Իրանի կառավարությունը պաշտոնապես ճանաչեց Խորհրդային Հայաստանի իշխանությունը:

Հայաստանի կառավարությունը 1921 թ. (1301 թ.) մայիսի 17-ին Իրանի կառավարությանը ներկայացրեց հուշագիր, որով առաջարկվում էր երկու երկրները դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակեն: Շահը փոխադարձաբար հայտնեց իր համաձայնությունը: Իսկ Հայաստանի կառավարության պահանջով մինչեւ վերջինիս ներկայացուցչի Թեհրան ժամանումը Շահը Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցչին պաշտոնապես ընդունեց, որպես Սոցիալիստական Հայաստանի շահերի պաշտպան: Ուստի եւ Իրանի արտաքին գործոց նախարարությունը Հայաստանի Հանրապետության նախկին դեսպանից պահանջեց իր լիազորությունը (եւ համապատասխան փաստաթղթերն ու արխիվները) փոխանցի Խորհրդային Ռուսաստանի լիազոր դեսպանին: Նա նույնպես դաշնակցական կառավարության դեսպանատանը հաղորդեց. «Ստանալով Հայաստանի նախարարների խորհրդի նամակն ու հեռագիրը, Իրանի կառավարությունը ալլեւ չի կարող Ձեզ ընդունել որպես Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն, ուստի անհրաժեշտ է խուսափել դրոշակը բարձրացնելուց»:

Շուտով Հայաստանը եւ Իրանը փոխանակեցին դիվանագիտական ներկայացուցիչներ: Հայաստանի ներկայացուցչության բացումը կատարվեց 1921 (1301 թ.) թվի սեպտեմբերի 27-ին Հայաստանի շահերի պաշտպան՝ Ռուսաստանի դեսպանի միջոցով:

1921 թվի (1301 թ.) նոյեմբերի 3-ին Հայաստանի ներկայացուցիչ Լեոն Սարգսյանը Թեհրան ժամանեց. նրան դիմավորեցին Իրանի արտգործ. նախարարության եւ ռուսական դեսպանատան պաշտոնյաները: Լիազորագրերի հանձնման արարողությունը կայացավ նոյեմբերի 8-ին երեկոյան ժամը չորսին

Սահարդարանից պալատում:

Իրանի կառավարությունն էլ իր հերթին նամակ հղելով Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ՝ Ալեքսանդր Մխատնիկյանին պաշտոնապես հայտնեց Հայաստանի դեսպանի ընդունումը Թեհրանում:

1921 թվի (1301 թ.) նոյեմբերի 13-ին Իրանը համաձայնեց Թավրիզում Հայաստանի հյուպատոսարան ունենալու առաջարկի հետ: Նոյեմբերի 29-ին Ռուսաստանի, Անգլիայի, Իտալիայի հյուպատոսների, Ամերիկայի ներկայացուցչի եւ այլ անձանց ներկայությամբ Հայաստանի հյուպատոսարանի բացումը կատարվեց Թավրիզում, եւ Ի.Երզնկյանը որպես հյուպատոս սկսեց իր աշխատանքը: Քանի որ 1922 թվի (1302 թ.) վերջերին Անդրկովկասի դաշնակցային հանրապետությունների միությունը որոշեց միասնաբար միայն մեկ դեսպան ունենալ Թեհրանում, ուստի Հայաստանի կառավարությունը 1922 թվի (1301 թ.) նոյեմբերին մեկի որոշմամբ դադարեցրեց իր դեսպանատան աշխատանքները Թեհրանում, սակայն Խորհրդային Միության դեսպանատան մեջ ստեղծվեց մի բաժին, որպեսզի զբաղվի համապատասխան գործերով:

Տնտեսություն

Թեհրանահայերը ընդհանրապես զբաղվել են սահմանափակ, որոշակի աշխատանքներով: Ըստ 19-րդ դարի վերջերին եղած վկայությունների, Թեհրանի ամենահմուտ օսկերիչները եւ լավագույն դերձակները հայերն են եղել: Նրանք զբաղվել են նաեւ առեստրով, գինեգործությամբ եւ գինեգործությամբ: Նրանք նույնպես աշխատել են պետական հիմնարկներում եւ բանակում: Ըստ նույն սուրբյուրների, հայերը ոչ միայն չեն ենթարկվել ազգային եւ կրոնական ճնշումների, այլեւ համեմատաբար ավելի շատ ազատություններ եւ սպառնալույսներ երաշխիքներ են ունեցել:

Աչքի ընկնող թեհրանահայ խոշոր ձեռնարկատե-

րերից պիտի հիշատակել Ռոման Իսաեւին, որը 1933 թվին (1313 թ.) հիմնադրեց Իրանի առաջին Գարեջրի արտադրության գործարանը: Ի միջի այլոց, նա մինչեւ 60-ական թթ. 4 խոշոր հիմնարկների տերն էր, ուրիշ 22-ի մասնատերը, միեւնույն ժամանակ դրանցից շատերի տնօրենը: Սակայն դրանով հանդերձ նա շատ ժողովրդասեր եւ բարերար անձնավորություն էր:

Թեհրանահայ այլ ձեռնարկատերերից են եղել Սահակյան գերդաստանը (որոնք հիմնել են նույնանուն դպրոցը), Սարգսյանները, Թոհմասյանները (որոնք հիմնել են նույնանուն դպրոցը), Դավիթյանյանները, որոնք հիմնականում ոչալկոհիկյան խմիչների արտադրության գործում էին:

Միջին խավի ձեռնարկատերերից են եղել Ֆրանկյան ընտանիքը (կաշվեգործության գործարանատեր), Միհայելյաններն ու Արզումանյանները (մսեղեն արտադրանքների գործարանատերեր), Կյուրոզյանը, որը Ղազվինի բնակիչներից էր եւ Թեհրան գալով հիմնադրեց տեխստիլի Ֆաբրիկա:

Մինչ իսլամական հեղափոխությունը հայերին են պատկանել Մառմառ եւ Նաղերի հյուրանոցները, Իֆել կինոդահլիճը, Շեմիրսն եւ Նաղերի ռեստորանները նաեւ մի քանի այլ հիմնարկներ եւ ընկերություններ, որոնք պետականացվել են հեղափոխությունից հետո:

Մի շարք այլ խոշոր ընկերություններ հիմա էլ հայերին են պատկանում, որոնցից կարելի է նշել Սարթի փոխադրական ընկերությունը (տեր ու տնօրեն՝ Լ. Սիարունյան):

Քացի վերոհիշյալից այժմ շատ թեհրանահայեր արհեստավորներ են. (սովորմենյանիկ, էլեկտրիկ, խառատ, կոշկակար, ավտոի եւ շենֆի ներկարար, դերձակ, օսկերիչ, նպարավաճառ, ուտեստավաճառ), աչքի են ընկել նաեւ արվեստի ասպարեզում (հատկապես նկարչության եւ երաժշտության), աշխատել են նաեւ համալսարանում, պետական ու մասնավոր հիմնարկներում եւ այլն:

Շարունակելի

Թեհրանահայության պատմություն (4)

(Շար. ճախորդ համարից)

ԷԴԻԿ ԲՍՂԴՍՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

Դպրոցներ

Թեհրանի առաջին կրթական օջախները հիմնադրվել են 1850-ական (1229 թ.) թվերին: Դրանք եկեղեցիներին կից հոգևոր դպրոցներ էին, աշակերտները սերտում էին կրոնական գրականություն:

1870 թվին (1249 թ.) ալալեցի Միխայել Սարգսյանի, դամասկոսցի Հովսեփ Գասպարյանի եւ տաճկահայ Կարապետ Բազարգանյանի ջանքերով հիմնադրվեց եվրոպական դասի առաջին դպրոցը՝ Կրթասիրաց միությունը:

Սույն թվին Դաովագե Ղազվին թաղում՝ Ս. Գետորդ եկեղեցուն կից հիմնադրվեց Հայկազյան դպրոցը:

Երբ Նասերեդինշահը եվրոպայից Թեհրան էր վերադառնում դպրոցի տաները մի խմբերգ կատարելով մասնակցում են դիմավորման հանդիսությանը: Շահը փոխադարձաբար շնորհակալություն հայտնելով տարեկան երկու հարյուր թուման նպաստ է նշանակում դպրոցի համար, որը հետագային դարձավ երեք հարյուր թուման:

Այս թվերին աստիճանաբար Դաովագե Ղազվինի թեհրանահայ բնակիչները Հասանաբադ թաղամաս էին փոխադրվում, ուստի Հայկազյան դպրոցն էլ 1903 թվին (1282 թ.) հիմնադրեց իր մասնաճյուղը՝ Բուշեշ դպրոցի տեղում (այժմյան Միրզաֆուլադ խան փողոցում):

Մյուս կողմից Դաովագե Ղազվինում հայ բնակչությունն ավելի ու ավելի էր նոսրանում, հետևաբար 1916 թ. (1295 թ.) տաների անբավարար թվի պատճառով փակվեց Հայկազյան դպրոցը (Դաովագե Ղազվինում)՝ եւ նրա սաները եւս փոխադրվեցին նոր դպրոցը:

1932-33 թթ. (1311-12 թթ.) ճախկին Սոր Զուլայեցի եւ Հեղկաստանի բնակիչ, բարերար Դավիթ Դավիթյանի նյութական օժանդակությամբ կառուցվեց այժմյան Դավթյան դպրոցի նոր շենքը:

Հիշարժան է, որ մինչեւ 1905 թվը (1284 թ.) տղայոց եւ օրիորդաց դասարանները լինում էին միասեռ: Իսկ 1906-7 թվերին (1285-6 թթ.) որոշվեց դասարանները վերածել երկսեռի: Մյուս կողմից 1893 թվին (1272 թ.) առանձին օրիորդաց դպրոց հիմնադրվեց, սակայն նյութական դժվարությունների պատճառով այն երկու տարի հետո փակվեց:

Դրանից հետո մինչ 1934 թվը (1313 թ.) օրիորդաց առանձին դպրոց չկար: Այդ թվին Մալմատտի բնակիչ Մարգար Մարգարյանը ի հիշատակ իր կորստյալ դստեր հիմնադրեց Մարիամյան օրիորդաց դպրոցը:

Նշենք որ 1936 թվին (1315 թ.) անգո Ռեզախանի հրամանով փակվեցին հայկական դպրոցները՝ այդ թվում էլ այժմ Դավթյան կոչվող Հայկազյան դպրոցը: Սա վեց տարուց հետո 1942 թվին (1321 թ.) վերաբացվեց: Ըստ ստացած արտոնագրի այն անվանվեց Բուշեշ, սակայն հանրությունը այն ճանաչում է Բուշեշ-Դավթյան անվամբ:

Այժմ Բուշեշ դպրոցը բաղկացած է երկու ճյուղե-



ԹԵՀՐԱՆԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

րից՝ տղայոց Բուշեշ-Դավթյանը եւ օրիորդաց Մարիամյանը:

1969-70 (1348-9 թ.) ուսումնական տարում Բուշեշ տարրական դպրոցում սովորում էին 77 աշակերտներ, իսկ միջնակարգում 1124 աշակերտ-ուսիկներ:

1936 թվի (1315 թ.) դպրոցների փակման եւ 1941-2 թթ. (1320-21 թթ.) վերաբացումից հետո, 1942 թվին Բեհշտաբադում, թաղի հայության ջանքերով հիմնադրվեց Դանայի դպրոցը, որը նյութական դժվարությունների, ինչպես նաեւ սաների թվի սակավության պատճառով 1968 թվին (1347 թ.) միավորվեց «Արաֆա» ազգային դպրոցի հետ: 1946 թվից (1325 թ.) հետո հիմնադրվեցին հետեւյալ դպրոցները՝ Արամը (կամ Արովյան) Մեյեղխանդանում, Շահագիզը Հեշմաթիյեում, Հախնազարյանը եւ Արաֆսը Յուսեֆաբադում, Անին (Ռոստոմ) Բահարում, Արամը Շահ Արասում: 1958 թվին (1337 թ.) հիմնադրվեցին Հեշմաթիյեում Սահակյան եւ Մաջիդիյեում Արաբաթ դպրոցները:

1950-ական 60-ական թթ. (1329-1339 թթ.) հիմնադրվեցին Հուր, Նայիրի, Թունյան եւ Բուստան դպրոցները, 1948 թվին (1327 թ.) Ներսիսյանը (Բեհշտաբադում), 1952 թվին (1331 թ.) Սուբարը, 1953-ին (1332 թ.) Թաբան, Բաֆի, Սեթալեշ, Փարթովի, եւ Արիշան դպրոցները: 1944 թվին (1323 թ.) հիմնադրվեց Բուշեշ մանկապարտեզը Այդինյան օժանդակությամբ:

→ 18

դասկերս
իրեն անգ
նում է իր
հաջալերվում

Պատժի մասին
բեր ձեռքեր ու
ցուցաբերեմք անհ
ելնելով իր անհա
գուցե որեւէ գործո
խակ մյուսը ավելի
հմտանում իմնաստա
լը լվանալ, զուգարան
հաղից օգտվել եւ այլն),
դադ, չղեւս է երկրորդին
սիրաղեւում այդ գործողո
սար րեւս է լինեմք, չէ որ
չեն:

Ինչդեռ նւեցինք հաջալերս
գոյություն ունի. ծանաչելով մ
րենք ամենից արդյունավեցը: Սի
գիրք են առնում աւխարհի չափ
խակ մյուսին այգի տանում, հաջո
կամ նվերն է ուրախացնում իսկ մեկ
բույրով, շոյանով, գրկելով է հաջալեր
վեմք տարբեր ձեւերից էլ ըստ տեղի,
դասանների, երեխայի տրամադրության
մեկը արդյունավեւ կլինի:

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Առաջին անգամ 1981 թվին հաղորդվեց աշխարհի
Աշխարհի Առողջապահության Կազմակերպության լուրը:

Մոտ 2.5 միլիոն մարդ մահացավ:

Մինչ 2000 թվը ենթադրվում է ԷՅԴԶ-ով (AIDS) վարս
հիվանդությունը դատում է, որպես ամենամահաբերը մարդկության:

Ժամդախտ հիվանդությունից 542 թ. Ք.Մ.Ա. մահացել են անհայտ:

Ժամդախտ հիվանդությունից 1347-1351 թթ. աշխարհում մահացել:

Ժամդախտ հիվանդությունից 19-րդ դարում աշխարհում մահացել է

ՏիՖ հիվանդությունից Ռուսաստանում 1917-1921 թթ. 25 միլիոն հիվ

Անգլանդի հիվանդությունից 1918-1919 թթ. աշխարհում մահացել է 22 միլիոն մարդ:

մարդ:

այսին դեպքերից, մահացել են 3 միլիոնը:

Թայմ, 7 հունիսի 1993

10

Այնպեստեւ հիմնադրվեցին Բերսաբե մանկապար
տեզը (1931 թվին (1310 թ.), Թումանյանը (1944-ին):

Վերոնիկայից բացի հիմնադրվել են նաեւ դաւա
նական դպրոցներ: Այսպես՝ Ամերիկացի բողոքական
միսիոներների դպրոցը, որն ունենր 56 տղա եւ 54 աղ-

ջիկ աշակերտներ: Ֆրանսիական Աղվենթիսը դպրո
ցը ուներ 40 տղա եւ 38 աղջիկ աշակերտություն:

Ստորեւ ներկայացվում է հայկական դպրոցների
1972-73 թթ. (1351-52 թթ.) վիճակացույցը:

Շարունակելի

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՎՌԴՈՒՄԻ ՀԱՄԱՐ

«Արաքս» թիվ 55-ի 22-րդ էջում «Թատերասրահնե
րի» եւ կինոդահլիճների նորությունները» տեղեկագրու
լումը տեխնիկական պատճառներով լույս է տեսել
առանց պրագրության, հետեւաբար մի շարք կետա
դրական սխալներով, որի համար ներողություն ենք
խնդրում հարգելի ընթերցողներից:

Խմբագրություն

15

Դաւանւցութիւնը եթէ լծակ հանդիսանայ իշխանութ
եան մէջ, այդ նոյն հաղափականութեանը դիմի կառչի:
Ասիկա կատարածի դուրս է... Մենք Թուրքիոյ դեմ դա
սեռազմ յայտարարելու հարց չունինք. ընդհակառակն,
համաձայն ենք, որ ամեն միջոցներու դիմով, որդեգր
մէք բարեկամութիւնները ժամանակի ընթացքին վերա
կառգին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
28 ապրիլի 1993

Թեհրանահայության պատմություն (5)

(Շար. նախորդ համարից)

Գրականությունը

Թեհրանահայության գրականությունը ձևավորվել է սկսած 19-րդ դարից: Այդ շրջանում ձևավորվող նոր մտածողության ու ազատասիրական գաղափարները մեծ ազդեցություն են գործել թեհրանահայության գրական կյանքում: Մասնավորապես այս հարցում մեծ դերակատարություն են ունեցել Ռուսաստանի և Կովկասի իրադարձությունները, որոնց ազդեցությունը անմիջապես աչտեղ էին փոխանցում հայ գաղթականները:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին իրանահայ գրականության յուրահատկությունը նոր ձևերի որոնումն էր. նաև կատարվեց մեծ փոփոխություն թարգմանչական աշխատանքում: Այս շրջանում էլ գրական աշխարհի մոտ գործեցին անվանի թարգմանիչներ Հովհաննես Մասեհյանն ու Հովսեփ Միրզայանը:

19-րդ դարի գրական և ֆաղափական մեծագույն դեմքերից պիտի հիշատակել Հ. Մասեհյանին: Նա ծնվել է 1244 թվին (1864թ.) Թեհրանում. նախնական կրթությունը ստացել Ս. Թուրեմ-Բարդեղյանի եկեղեցում (Աբդուլ Ազիմ թաղամաս): Այնուհետ սովորել է Հայկազյան դպրոցում: Հովհաննեսի հայրը նկատի ունենալով նրա արական ուղիծությունն ու ընդունակությունները որոշեց առավել հետաձուլել ինքն ինքն հայտնի կրթող աստիարակչությանը, և նրան ուղարկեց Թավրիզ, քնուր Երվանդյանի մոտ: (Վերջինս իր ժամանակաշրջանում համարվում էր գրագետ և բանիմաց անձնավորություն՝ տիրապետում էր պարսկերեն և ֆարսերեն լեզուներին, եղել է նաև Մոզաֆարեդին շահի ուսուցիչը թարգմանության շրջանում):

1262-5 (1882-5) թթ. Հ. Մասեհյանը ուսումը շարունակել է Փարիզում, այնուհետև Իրան վերադառնալով գրադրվել է թարգմանչական գործավարությամբ: Այս ընթացքում էլ նա թարգմանել է մի շարք գրքեր, որոնցից ամենանշանավորը Ա. Դյումաի և Վ. Հյուգոյի երկերն են: Նա տիրապետում էր հայերեն, պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և արաբերեն լեզուներին. այդ իսկ առիթով նա իրանական պատմությունների և միջին դարերի բազմիցս գործուղվել է արտատպագրման: Ավելի ուշ, որպես հյուպատոս և դեսպան ծառայել է Գերմանիայում, Անգլիայում և Շվեյցարիայում:

Մասեհյանը, որին «Մեծ հայ» էին անվանում արտատպագրման լրագրողները, իր մահկանացուն կնքեց 1311 թվին (1931 թ.) Շապուրիայից Իրան վերադարձի ճանապարհին:

Մասեհյանը հայ գրականության անդատաճանաչ հույսերի է, որպես Շեֆազիյի անգլագրական թարգմանիչ: Այդ են մեկ դար է, որ նրա թարգմանությունները մնում են, որպես լավագույններ... Նա թարգմանել է Շեֆազիյի «Ռոման և Ժուլիեն», «Լենինսկի վաճառականը», «Համբեր», «Մաքեր», «Օթելլո», «Արիս Լիր», «Ինչպես կուզեմ», «Հայտնի կեսար»,

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

«Անթոլիոս», «Փոթորիկ», «Շատ աղմուկ ոչնչից», «Միջամատչին գիշերվա երազ» և այլն: Մասեհյանը Նասր-ու-Մոլիի օգնությամբ նաև պարսկերենի է թարգմանել «Ռոմեո-Շուլիկը»:

Այս շրջանի (Ղաջարիյե շրջանի) ֆաղափական, նաև գրական աշխարհի է Միրզա-Մեյլիֆահան-Նազեմիդին: Նա ծնվել է 1213 թվին (1833 թ.) և նախնական կրթությունն ստացել Նոր Ջուղայում: 1223 թվից (1843 թ.) ուսումը շարունակելու համար մեկնել է Ֆրանսիա և սերտել ժամանակակից գործաձական մի փանի լեզուներ, այնուհետև Իրան վերադարձել, և որպես Նասերեդին-շահի թարգմանիչ անցել պետական ծառայության ոլորտը: Նա իր ժամանակների ազատամտության ուսուցիչներից էր: Նա հեղինակել է «Անհատության գրություն», և հանձնել Նասերեդին շահին և վերջինիս հորդորել ընթացի տա գրություն առաջարկված բարեփոխումներին:

Նա իր բարեփոխումները իրականացնելու ճանապարհին մոլորության մատնվելով շեղ ուղի ընտրեց՝ հիմնադրեց մասնականությունը և փորձեց ֆաղափական աշխարհի ներգրավել:

Նա հեղինակել է նաև այլ գրքեր՝ «Ալիի խոսքեր», «Մարդկության գծերը», «Առական և ասածներ» և այլն:

Նա ուսումնասիրությունների ընթացքում հույսերեքեք արարեցին և պարսկերենի մի շարք թերությունները և հորինեց ինչոր նոր տարբեր, որի առանձնահատկություններից էր առաջնական նշանների ընդգրկումը տարբերում... Նա Մադիյի «Գուեսթանը» այս գրքով վերաշարադրեց, և ծավալուն նախաբան գրեց դրա համար: Այս նախաբանում նա անդրադառնում էր նաև Միջին-Արևելյան ժողովուրդների հետաճանաչության պատճառներին:

Մեյլիֆահանը տարբեր շրջաններում որպես Իրանի դեսպան ծառայել է Անգլիայում, Իտալիայում և Շվեյցարիայում:

Մեյլիֆահանը 1269 թվին (1889թ.) «Արթուրի» արտաներության բեկանածի հետեւանալով ազատվեց աշխատանքից և առավել զբաղվեց գրական գործունեությամբ՝ մասնավորապես հրատարակելով «Ղանուն» (օրենք) թերթը:

Անտարակույս, Միրզանեյիֆահանը մեծ ազդեցության է գործել 19-րդ դարի իրանահայ գրականության և հասկապես ուժի վրա:

19-րդ դարի 90-ական թթ. Հովսեփ Միրզայանի (խորհրդարանում իրանահայերի ներկայացուցիչ) թարգմանությունները ներկայացվեցին ընթերցասեր հասարակությանը: Նա թարգմանել է Վալթեր Սկոթի, Լեոնտոսի, Մալիյեյի, Բալյոնի և... երկերը: 1290 թվից (1912) նա սկսեց թարգմանել պարսից գրականության լավագույն գործերը: Այս տարիներին նա թարգմանեց Սադու, Հաֆեզի, Բարս Թա-

→

հերի եւ Խալամի կարեւորագույն նրկերը, որոնք մինչ աչսօր մնում են որպէս անգուցական թարգմանություններ: Միրզալանը թարգմանել է նաեւ հատվածներ Ֆերդովսիից եւ Ռաբինդրանաթ Թագուրից:

Գրական ալս միավորի անդամները փորձում էին



ժամանակակից գրական ձևերը օգտագործել իրենց երկերում: Նրանք համարյա լավածանոթ էին ժամանակակից համաշխարհային գրականությանն ու գրողներին:

«Նոր Էջի» հիմնադիր ին գործունյա անդամներից պիտի հիշատակելի Հրանդ Դադյանին: Նա գրական ուղւոյան աշխարհի մտաւ «Թշնամիները» (Բաբոս 1908, 1286), «Նոր ուղիեր» (Թեհրան 1961, 1339) եւ այլ գործերով: «Նոր Էջի» մշուս անդամներն էին Դեւը (Մարգար Ղարաբեկյան), Աշոտ Ասլանը, Արամ (Արա Հովհաննիսյան), Գալուստ Խաննեցը, Արշավիր Մկրտիչը, Արմեն Գեաը, Զորադ Միրզայանը, Ռ. Բենը (Ռուբեն Հովհաննիսյան):

Վերոհիշյալների գործերում զգացավում է հայ դասականներ Թումանյանի, Չարենցի, Խաչատրյանի, Սիմանյոսի, Վարուժանի, Մեծարենցի եւ հատկապես Տերյանի ազդեցությունը: Օրինակ վերջինիցս բացահայտ ազդված են Արամ Գարոնեն, Գեորգ Դարձին եւ Մարգար Ղարաբեգյանը:

Իրանահայ գրողներից առավել արժեքավոր ժա-
նանգություն է թողել Ջ. Միրզայանը, նրան են
պատկանում «Թաց Մայթեր» եւ «Ակնարկ Իրանի
արդի գրականության մասին» գործերը: Նա թարգ-
մանել է նաեւ Բաբա Թաեերի, Խալամի, Մարթ Թու-
եյնի, Դոստոյեվսկու եւ Գարսիա Լորիայի գործե-
րը:

Շարունակելի

**ԻՐԱՆԱՀԱՅ ԵՐԵՔ ԹԵՄԵՐԻ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մ
ալը
ռաշո
ժողո
միա
րան
նակ
առա
արտ
համ
դալի
բազ
վեր
Հա
հնու
րում
նեկ
գործ
խնայ
յալ
պի
յան
եւ
հոդ
Հար
եւ
մեծ
Ինչ
նոր
մար
մեմ
ծա
տու
թյու
րութ
եմ
դը
Աղո
ալա
րեւ
դիմ
նեւ
ա

uG
u-
ih
u
u-
u-
.n
f
η
n
r-
l-

1

1

ii

1

1

10

—

1

ԱՄԷՐԻՍՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍՏԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ
ՆՇԱՆՆ ԿՐԴ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

Թեհրանահայության պատմություն (6)

Նկարչությունը

Թեհրանահայության գեղանկարչության պատմության ականավոր դեմքերից է Անդրե Մերոզին (Դարվիշ): Նա ծնվել է 1274 (1896) թվին Թեհրանում, եւ երիտասարդ հասակից զբաղվել արվեստով. 1290 (1912) թվին անցել է Եւրոպա եւ ծանոթացել Եւրոպայի արվեստի գործերի հետ: 1303- (1925) թվին նա ձեռնարկեց Շահնամի թեմայով նկարչությունների մի շարան եւ տաս տարի զբաղվեց այդ գործով: Դարվիշը 1312 (1934) թվին իր աշխատանքները ցուցադրեց Թեհրանում, Բոմբեյում եւ Կալկատայում, իսկ 1314 (1936)-ին Վիեննայում:

Թեհրանահայ հայտնի այլ նկարիչներից են Ավագ Հայրապետյանը (որի աշխատանքների հիմնական թեման մարդու եւ բնության փոխհարաբերությունն է), Սիֆայել Շահբազյանն ու Տիգրան Բազիլը:

Թեհրանահայ մի քանի նկարիչներ էլ ուսանել էին Եւրոպայում եւ հետեւել եւրոպական տարբեր դրամատիկ, որոնցից կարելի է նշել Մարիո Գրիգորյանին (կուբիզմ), Հարություն Մինասյանին (աբստրակտիզմ), Էդվարդ Այվազյանին, Սեդրակ Ղազարյանին, Սիրակ Մելիքյանին եւ ուրիշների:

Հիշատակելի է, որ 1355 (1977) թվին ամերիկացի խոշոր դրամատեր Նելսոն Բաֆֆերը Թեհրանում գտնվելու օրերին այցելեց նաեւ Մարիո Գրիգորյանի արվեստանոցը, մի քանի գործեր գնեց եւ հեղինակին հրավիրեց Ամերիկա սեփական առանձնատան որոշ մասերը նկարչությամբ զարդարելու:

Երաժշտությունը

Թեհրանահայության երաժշտության պատմությունը սկզբնավորվել է 17-րդ դարում, եւ մինչ 20-րդ դարը այն գոյություն ուներ հիմնականում որպես աշուղական երգեր: Սակայն 19-րդ դարից սկսած արդեն ձեւավորվում է երաժշտությունը իր արդիական հասկացությամբ. դրանով հանդերձ մեր երաժիշտները առանձնապես չեն հաջողել զարգացնել երաժշտությունը, ոչ էլ առանձնապես հայտնի երաժշտական երկեր են հորինել:

Թեհրանահայ հայտնի երաժիշտներից եւ խմբավարներից պիտի հիշատակել Լեւոն Գրիգորյանին, որը ծնվել է 1264 (1886) թվին Թավրիզում: Նա ուսումը շարունակել է Թավրիզի, Թիֆլիսի եւ Բելգիայի տարբեր երաժիշտների մոտ: Այնուհետեւ ինքն է զբաղվել երաժշտության ուսուցմամբ: Ավելի ուշ Թավրիզում նա կազմավորել է «Սրտի» երաժշտական համույթը: Նա 1324 (1946) թվին փոխադրվեց Թեհրան եւ կազմավորեց «Գուսան» երգչախումբը:

Լեւոն Գրիգորյանի հայտնի գործերից կարելի է նշել Ավ. Իսահակյանի մի քանի բանաստեղծությունների համար գրված եղանակները նաեւ պարսկական մի քանի երգերի երաժշտական կոմպոզիցիան:

ԷՂԻԿ ԲՍԴԴՍՍՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

(Շար. նախորդ համարից)

Իրանահայ երաժշտության ականավոր դեմքերից է Նիկոլ Գալանտերյանը: Նա ծնվել է 1259 (1881) թվին Արեւմտյան Հայաստանում, այնուհետեւ փոխադրվել Վառնա (Բուլղարիա) եւ ապա Թիֆլիս: 1289 (1911) թվին Հայկազյան դպրոցի հրավերով նա գալիս է Թեհրան եւ մինչ 1322 (1944) թվի մնում այստեղ (այս թվին էլ նա կնքում է մահկանացուն):

Գալանտերյանն ունի շատ գործեր: Նա կատարել է Ավետիս Իսահակյանի, Վ. Տերյանի, Հով. Թումանյանի մի շարք բանաստեղծությունների կոմպոզիցիան՝ այդ թվում եւ Թումանյանի «Չարի վերջը», «Լավոր որսկան» եւ «Փարվանա» օպերաներին: Այս գործերը բեմադրվել են Հայկազյան դպրոցում եւ զրադաշտականների բացօթյա թատրոնում:

Հրատարակվել են Գալանտերյանի թվով մոտ հազար գործերը: Նրա գործերից հրապարակվել են Կահիրեյում հրատարակված «Գանձարան» եւ «Նոր հասկեր» երգարաններում, իրանահայ նաեւ պարսկատառ պարբերականներում:

Իրանահայ երաժիշտ Համբարձում Գրիգորյանն իր գործունեությունն սկսել է 1292-93 (1914-15) թթ. Լազվիլի հայոց դպրոցում՝ որպես երաժշտության դասատու. այնուհետեւ շարունակել գործունեությունն Ռաշտում 1295-96 (1917-18) թթ.: Այս թվին Չեխոյովսկիայի կողմից նրան բուրսա է շնորհվում, եւ նա մեկնում է Պրագա, ապա 1302 (1924) թվին՝ Փարիզ եւ չորս տարի ուսանում այնտեղ եւ հետո վերադառնում Թեհրան: Սրանից հետո երկար տարիներ նա երաժշտություն է դասավանդում Բուշեշ-Դավթյան դպրոցում: Դրանից բացի նա կազմավորում է «Կոմիտաս» երգչախումբը 1307 (1929) թվին նաեւ զբաղվում լայնածավալ երաժշտական գործունեությամբ: Նա հորինել է մոտ 100 խմբային եւ մեներգային գործեր, կատարել ժողովրդական գուսանական երգերի եւ ռոմանսների կոմպոզիցիան: Նա Ավ. Իսահակյանի, Հով. Շիրազի եւ... մի շարք բանաստեղծությունների համար եղանակներ է հորինել:

Իրանահայ մշակույթի ասպարեզում մեծ է երգչախմբերի դերը: Նրանք գոյություն են ունեցել որպես մշակութային միություններում գործող միավորներ, դպրոցներում՝ որպես արտադասարանային պարաֆունկցիների միավորներ, նաեւ՝ որպես անկախ խմբեր: Մեծ է նրանց դերը իրանահայ երաժշտության կյանքում: Առավել մեծ դերակատարություն են ունեցել օրինակ՝ «Կոմիտաս» երգչախումբը, որին ժամանակին անդամակցել է Հովհ. Բաղդասարը, «Արմեն», «Հայ երգ» եւ «Գողտան» երգչախմբերը (վերջինիս հիմնադիրը՝ Նիկոլ Գալանտերյան), «Ուրարտու» երգչախումբը եւ ուրիշներ, սրանցից ոմանք իրենց գործունեությունն են շարունակում մինչ այսօր:

Թեհրանահայության պատմություն (6)(7)

Թատրոն

ԷԳԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

(Շար. նախորդ համարից)

Իրանահայ թատրոնը ծնունդ է առել 19-րդ դարի վերջերին: Նույն դարվա 70-ական 80-ական տասնամյակներում Թավրիզում, Թեհրանում եւ Նոր Զուղայում ցուցադրվեցին առաջին դարձական բեմադրությունները, մի առ ժամանակ անց իրանահայ թատրոնը իր տեղը գտավ միություններում եւ թատերական խմբակներում:

1881 թվին Թեհրանում կազմվեց «Հայ թատերասերների միությունը»: Նրանց ջանքերով բեմադրվեցին հայ դրամատուրգիայի վարպետներ՝ Գաբրիել Մունդուկյանի եւ Ալեքսանդր Շիրվանզադեի պիեսները: Միաժամանակ նաեւ բեմադրվում էին արեւմտյան թատերագիրների, հատկապես Մոլիերի պիեսները: Այդ շրջանի նշանավոր թատերական գործիչներից են եղել Աբելյանը, Մանվելյանը, Ոսկանյանը, Սիրանուշը, Արմենյանը, Դուրյանը, Արուս Ոսկանյանը, Ժասմենը եւ այլոք:

Իրանահայ թատրոնը դժբախտաբար չգտավ իր վերելի ուղիները եւ մնաց սիրողական մակարդակում:

Որոշ դպրոցներում աշխատում էին աշակերտական թատերական խմբակներ: 1950 թ. կազմվեց «Աղամյան», 1954 թ. «Շանթ» եւ 1955 թ. «Թեհրանահայ դրամատիկական» խմբակը: Սակայն այդ խմբերը երկար չապրեցին:

«Պրոֆեսիոնալ թատերական խումբը» կազմված Մկրտիչ Թաշչյանից, Մանվել Մարությանից եւ Կոստանյան գույզերից մեծ դեր ունեցավ իրանահայ թատրոնի պատմությունում:

Իրանահայ թատրոնի զարգացման մեջ մեծ դեր է ունեցել Հայկ Գարագաշը՝ «Վերածնունդ» թերթի խմբագիրը:

Գիտություն

Գիտության ասպարեզում իրանահայ համայնքը նշանավոր դեմքեր է ունեցել: Նրանց շարքում են դասվում Հարտարապետ Վարդանը, որը Ռեզա Շահի օրոք զբաղվում էր Հարտարապետությունով, Թեհրանի համալսարանի բժշկական ֆակուլտետի խորհրդի անդամ դոկտ. Ալեքսանդր Բաղդիսյանը, որը համարվում էր Իրանի ինը լավագույն գիտնականներից մեկը, որոնց հաջողվել էր շահել «Ալբորզ» մրցանակը (բոֆիմիայի եւ ֆիզիոլոգիայի ասպարեզում նա հայտնաբերել էր տիրոխտական գեղձի նոր հորմոն), Թեհրանի համալսարանի դասախոս, Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի անդամ դոկտ. Գառնիկը, որը 1975 թ. Պուլ Փոլ 6-րդից ստացավ «Կոմանդոր Պապ»



շանճանագիրը:

Հռչակավոր պրոֆեսոր Ալեքսանդր Անյան (Սմբատ) ծնվել է 1902 թ. Թավրիզում: Միջնակարգ եւ բարձրագույն կրթությունը ավարտելուց հետո (Թեհրանի համալսարան): Նա մեկնում է ԱՄՆ, այնտեղ ստանում իր դոկտորականը: Պրոֆեսորը տարիներ է, ինչ դասավանդում է ԱՄՆ-ի համալսարաններում եւ երբեմն հրավիրվում է Իրան դասախոսելու:

Դոկտ. Մարգար Գրիգորյանը եղել է «Շարիֆ ինդուստրիալ համալսարանի» Հարտարապետական ֆակուլտետի նախկին տնօրենը: Նա տարիներ շարունակ ղեկավարել է «տիեզերական կառույցներ» միջազգային կոնֆերանսը եւ այդ ասպարեզում համարվում է հիմնադիրներից մեկը: Դոկտ. Ալենուշ Տերյանը դասավանդել է Թեհրանի համալսարանում եւ ղեկավարել է Թեհրանի աստղադիտարանը:

1970 թ. Օգոստոսին Բրայթոնում կայացած աստղագետների միջազգային կոնֆերանսում մասնակցում էին հայ գիտնականներ Հայաստանից, երկու հայ աստղագետ Ֆրանսիայից եւ ԱՄՆ-ից, մի կին աստղագետ Մեֆիկայից եւ դոկտ. Ալենուշ Տերյանը Իրանից: Դարտարապետ Մկրտչյանը Ամիր Բաբիր համալսարանի Հանապարհաշինական ֆակուլտետի նախկին դասախոսն է եղել: Մկրտչյանը բազում մենագրությունների հեղինակ է: Նրա գիտական աշխատանքները մասնագետների եւ ուսանողների համար ծառայում են որպես սկզբնաղբյուր:

Երկրաբան, սեսմոլոգ եւ հրաբխագետ դոկտ. Մանվել Պերպերյանը Իրանի գիտության նշանավոր դեմքերից է: Նա բազմաթիվ մենագրությունների հեղինակ է:

Շարունակելի

Թեհրանահայության պատմություն (8)

Թեհրանի հայոց գրադարանները

ԷԳԻԿ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

(Շար. նախորդ համարից)

19-րդ դարի կեսերին, դպրոցների հիմնադրման հետ պուգընթաց, Իրանում կյանքի կոչվեցին նաեւ հայկական արդիական գրադարաններ:

Առաջին գրադարանները հիմնադրվեցին Թավրիզ, Նոր Ջուղա, Ռաշտ եւ Թեհրան քաղաքներում: Հայկական գյուղերում եւս եկեղեցիներին կից գոյություն ունեին գրադարաններ, որոնք գյուղերի հայաթափումից հետո քաղաք փոխադրվելով մեծ մասամբ համալրեցին եկեղեցիների գրադարանները:

1276 (1877) թ. Թավրիզի Ղալա շրջանում հիմնադրվեց հայկական առաջին անկախ գրադարանը:

Թեհրանի հայկական գրադարանները մինչեւ 1309 (1930)-ական թթ. ընդհանրապես կյված էին դպրոցներին, սակայն 1315 (1936) թվականին, երբ պետության հրամանով փակվեցին հայոց դպրոցները, «Հայ կանանց բարեգործական միության» ջանքերով այդ գրադարանների գրքերը հավաքվեցին ու կենտրոնացվեցին: Հետագայում, թեմական խորհուրդի որոշումով այդ գրքերը (3-4 հազար հատոր) «Հայոց ակումբի» տնօրինությանը հանձնվեց: 1349 (1970) թ. հիշյալ գրադարանի գրքերը 12 հազար հատորի էր հասնում, որոնք մեծ մասամբ հայերեն էին, բայց եւ կաշին պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ ռուսերեն գրքեր: Իրանի հեղափոխությունից հետո այդ գրադարանը իր աշխատանքը վերսկսեց:

Հարկ է անդրադառնալ նաեւ «Սաքո» գրադարան-գրախանութին, որն իր ստեղծման հենց սկզբից (1312 (1933) թ.) գրքեր է տրամադրել ընթերցասեր հասարակության չնչին գումարների դիմաց: Այս գրախանութի տիրոջ եւ տնօրենի ջանադրությամբ այն դարձել էր ոչ միայն Իրանի այլեւ միջին-Ասիայի ամենախոշոր ու ակտիվ գրախանութներից մեկը, որի միջոցով էր հաճախ մատակարարվում ընթերցասեր հասարակության գրքերը: Այս գրախանութը մասնաճյուղեր ուներ նաեւ Իրանի տարբեր քաղաքներում: 1362 (1983) թ. մի հանձնախմբի կողմից կազմակերպվեց եւ նշվեց այս գրախանութի հիմնադրման 50-ամյակը:

Մշակութային միություններ եւ կազմակերպություններ

1260 (1881) թ. հիմնադրվեց Թեհրանահայ առաջին միություն «Հայ թատերասիրաց միությունը»: 1263 (1884) թ. բացվեց նաեւ այս թատրոնի սրահը, որտեղ Թեհրանում եղած ժամանակ քեմ է բարձրացել հայ անվանի լեզվաբան Հ. Ահառյանը: Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» թատրոնի Մանուկ աղայի դերում:

Հայկական մշակութային առաջին միություններն ու ակումբները Իրանում կյանքի են կոչվել 1284-1290 (1905-1911) թթ.: Այս տարիների ընթացքում միություններ հիմնադրվեցին Իսպահանի Նոր Ջուղայում, Թեհրանում, Թավրիզում, ինչպես նաեւ Մասեղ Սուլեյմանում եւ այլուր:

1286 (1907) թվականին կազմվեց «Հայ կանանց բարեգործական միությունը, իսկ 1310 (1930)-ական թթ. ազգային - մշակութային միություններ կյանքի կոչվեցին «Հայկական միություններ» ընդհանուր անվան ներքո:

«Թեհրանի հայոց ակումբ» (կամ միությունը) հիմնադրվել է 1297 (1918) թ., որն ունի սրահ եւ վանագան մշակութային հնարավորություններ: (1322) 1943 թ. իր աշխատանքն սկսեց



ակումբի գրադարանը:

1336 (1957) թ. մի խումբ հայ երիտասարդների ջանքերով հիմնադրվեց «Գարուն» մշակութային միությունը, որտեղ հավաքվում էին գրականասերներ՝ բանախոսություններ ունկնդրելու, գրական ժողովների մասնակցելու նպատակով: Այնտեղ երբեմն ցուցադրվում էին ֆիլմեր եւ քննադրություններ:

Թեհրանում կազմված մյուս միությունները, որոնք մեծ մասամբ այսօր եւս շարունակում են իրենց աշխատանքը հետեւյալն են

Հայ կին միություն (հիմնադրված 1318 (1939) թ.)

Հայ մարզա-մշակութային «Արարատ» կազմակերպություն (հիմնադրված 1323 (1944) թ.)

Հայ ակումբ (հիմնադրված 1297 (1918) թ.)

Հայ գրողների միություն (հիմնադրված 1341 (1962) թ.)

Հայ Բարեգործական ընդհ. միության կանանց մասնաճյուղ-հիմնված 1314 (1935) թ.)

Հայ Մշակութային միություն- հիմնադրված 1321-1330 (1942-1951) թթ.)

Միտք միություն- հիմնադրված 1298-1306 (1919-1927) թթ.)

«Նոր էջ» գրական խմբակցություն- հիմնադրված 1314-1359 (1935-1980) թթ.)

Թեհրանահայ գրական շրջանակ- հիմնադրված 1365 (1986) թ.)

Հայ մարզա-մշակութային «Սիփան» միություն, «Շահ Ազիզ» մարզական, Իրանահայ Ազգային-մշակութային միություն, «Արմեն» մշակութային միություն, «Արովյան» մշակութային միություն, «Հ.Մ.Մ. Սանահին միություն», Չարմահալի հայ գրականասիրաց միություն (Աբադանում 1309 (1930) թ., Թեհրանի մասնաճյուղը 1322 (1943) թ.), Ղարադաղի հայ մշակութային միություն, «Էրեբունի» մշակութային միություն, Հայ բարեգործական ընդհանուր միություն, Հայ եկեղեցասիրաց կանանց միություն, Հայ համալսարանականների միություն, Հայ մշակութային կենտրոն, Հայկական ժողովրդային միություն 1365 (1986) եւ այլն:

Ոչ-մշակութային հայկական կազմակերպություններից կարելի է հիշատակել «Ավետիսյան» եւ «Գրիգորիս» բուժարանները, որոնք առ այսօր շարունակում են իրենց աշխատանքը:

Շարունակելի

ԹԵԽՐԱՆԱԽԱՅՈՒԹՅԱՆ ԱՄԱՏՄՈՒԹՅՈՒՆ (Ց)(Գ)

(Շար. Նախորդ համարից)

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

ԹԵԽՐԱՆԱԽԱՅ ՄԱՄՈՒԼ

Թեխրանախայ առաջին թերթերից կարելի է համարել «Շավիղ» եւ «Շարժում» շաբաթաթերթերը, որոնք լույս են տեսել 1273-76 (1894-1897) թթ.: Ստորեւ բերվում է Թեխրանում հրատարակված մամուլի ցանկը՝ Ներառյալ օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագրեր, տարեգրքեր եւ այլն:

Արովյան- տարեգիրք (1361 (1982) թ.)

Արարատ- շաբաթաթերթ մշակութային, մարզական, «Արարատ» մարզականի պաշտոնաթերթ (1338-39 (1959-1960) թթ.)

Արաքս- Նախկինում «Արաք», ամսագիր, մշակութային, հասարակ-գրական, (1366 (1987) թվականի մարտից)

Առավոտ- շաբաթաթերթ, (1338-39 (1959-1960) թթ.)

Արփի- գրական, գեղարվեստական ամսագիր, տնօրեն՝ Թադեոսյան (1328-1332 (1949-1953) թթ.)

Արուս- միայն մեկ համար (1329 (1950) թ.)

Արշալույս- շաբաթաթերթ (1291 (1912) թ.)

Արմեն- գեղարվեստական, գրական, թատերական, տնօրեն՝ Արքի Ավանիսյան (1343 (1964) թ.)

Արմենուհի- գրական ամսագիր, տնօրեն՝ Անդրե S. Օհանյան (1328-34 (1949-1955) թթ.)

Արուսյակ- (1314-15, 1321 (1935-36, 1942) թթ.)

Ազդարար ճշմարտության- (1326 (1947) թ.)

Աստղ արեւելյան- շաբաթաթերթ (1277-75 (1893-1896) թթ.)

Աշխատանք- օրաթերթ (1325 (1946) թ.)

Ալիք- օրաթերթ, հասարակ-քաղաքական ու մշակութային, հրատարակվում է առաջօր (1320 (1931) թ.)

Ալիք երիտասարդական- երկշաբաթաթերթ (1348 (1969) թ.)

Ալիք ամսագիր- (1341-45 (1962-1966) թթ.)

Ալիք օրացույց- (1361 (1982) թ.)

Իրանի առավոտ- շաբաթաթերթ (1297 (1918) թ.)

Իրանի աշխատավոր- շաբաթաթերթ (1295 (1916) թ.)

Պարսկահայ տարեցույց- (1306-9 (1927-1930) թթ.)

Բանվոր- շաբաթաթերթ (1300-4 (1921-1925) թթ.)

Պահակ- տասնօրյա պարբերաթերթ 1330 (1951) թ.)

Պահակ- ամսագիր 1330-31 (մայիս 1951-օգոստոս 1952 թթ.)

Բորոխ- մանկա-պատանեկան շաբաթաթերթ (1319-21 (1940-1942) թթ.)

Բորոխ- երգիծական շաբաթաթերթ (սկզբում երկշաբաթաթերթ տնօրեն՝ Գարագաշ 1296 (1917) թ.)

Փյունիկ- շաբաթաթերթ, հասարակ-քաղաքական եւ մշակութային (1358-61 (1979-1983) թթ.)

Ֆախավել- շաբաթաթերթ, խմբագիր՝ Միրզայան (1329-37 (1950-1958) թթ.)

Ֆախավել- երգիծական ժողովածու (1321-23 (1942-1944) թթ.)

Չարենց- տարեգիրք, օրացույց (1367 (1983) թ.)

Րաֆֆի- տարեգիրք, Տաճատ Պողոսյան (1348-49 (1969-1970) թթ.)

Րաֆֆի- օրացույց, հրատարակիչ՝ Տ. Պողոսյան, այժմ՝ Մարտիկ Պողոսյան (1320 (1941) թվականից)

Ռանչպար- հավանաբար կոմունիստների առաջին պաշտո-

ՆՈՐ ՊԱՏԳԱՍ

ամսագրի անդրանիկ

համարի շապիկը

(Հունվար 1924)



նաթերթը (1300 (1921) թ.)

Իրանի ռանչպար- շաբաթաթերթ (1300-2 (1921-1923) թթ.)

Միաճան- իրանախայ ազգային-մշակութային միության պաշտոնաթերթ, ամսագիր (1361 (1982) թ.)

Շարժում- շաբաթաթերթ (1273-76 (1894-1897) թթ.)

Շավիղ- շաբաթաթերթ (1273-76 (1894-1897) թթ.)

Գաղափար- շաբաթաթերթ (1304-6 (1925-1927) թ.) տնօրեն՝ Արամ Բեգյան

Գիտություն եւ արվեստ- (1325 (1946) թ.)

Գարուն- տարեգիրք, օրացույց (1362 (1983) թ.)

Գարուն- օրաթերթ (1324 (1945) թ.)

Կանթեղ - տարեգիրք, օրացույց, տնօրեն՝ Հովհաննես Տ. Պետրոսյան (1338 (1959) թվականից այժմ)

Լուսաբեր- ամսագիր, հրատարակիչ՝ Աշոտ Մուրադխանյան (1328-50 (1949-1971) թթ.)

Լույս- երկամսյա հանդես (1322-24 (1943-1945) թթ.)

Մասիս- Իրանում առաջին հայկական օրացույց (1300 (1921) թ.) տնօրեն՝ Հակոբ Աճառյան, Նախ Թավրիզում եւ ապա Թեխրանում է հրատարակվել:

Սեփյան- շաբաթաթերթ, տնօրեն՝ Ա. Եղյանց (1303 (1924) թ.)

Մշակույթ- միայն մեկ համար 1323 (1944) թ.

Միություն-

Նաչիրի- Օրացույց (1322 (1943) թվականից այժմ) Սամուել Սարուխանյան եւ Սեպուհ Ամիրխանյան

Նոր Էջ- գիրք գրականության (1314-54 (1935-1975) թթ.)

Նավասարդ- պարբերագիր (1316-18 (1937-39) թթ.)

Նոր աղբյուր- ամսագիր (1321-27 (1942-48) թթ.)

Նոր ալգ- շաբաթաթերթ (1330-2 (1951-53) թթ.)

Նոր խոսք- տասնօրյա հանդես (1309 (1930) թ.)

Նոր խոսք- շաբաթաթերթ (1358-59 (1979-1980) թթ.)

Նոր պատգամ- շաբաթաթերթ (1358-59 (1979-1980) թթ.)

Նոր պատգամ- ամսագիր 1303-1304 (1924-1925 թթ.)

Նոր գաղափար- խմբագիր՝ Դուկտ. Ղապար Ղապարյան (1307 (1928) թ.)

Նոր կյանք- շաբաթաթերթ (1301-6 (1922-1927) թթ.)

Նոր հասկեր- երկշաբաթաթերթ (1314-15 1935-1936 թթ.)

Վերածնունդ- շաբաթաթերթ եւ օրաթերթ (1309-32 1930-

Թեհրանահայության պատմություն (10)

(Շար. նախորդ համարից եւ վերջ)

Հայերի դավանանքը

1. Լուսավորչական հայեր. Հայերի քաղաքական մեծամասնությունը Լուսավորչական եկեղեցուն են պատկանում, որը հայոց հնագույն ու գլխավոր եկեղեցին է համարվում:

2. Կաթոլիկ հայեր. Կաթոլիկ հայերը Վատիկանի Պապին են ենթակա, բայց եւ մոտ հարաբերություն ունեն Լուսավորչական հայերի հետ:

3. Ծաթաթական հայեր. Մի խումբ ամերիկացի քահանաներ հիմնադրեցին այս եկեղեցին, որին հետեւում են փոքր թվով հայեր:

5. Կրեմլիտ հայեր. Կաթոլիկ եկեղեցու մասնաճյուղերից է, որի առաջին քահանաները 1004 թ. (1625 թ.) Կրեմլ լեռից Թեհրան եկան, եւ նրա հետեւորդները փոքրամիջ են:

6. Բողոքական հայեր. Ամերիկացիներն են այս եկեղեցու հիմնադիրը համարվում, որոնց կենտրոնատեղին Ավետարանական եկեղեցին է, որը գտնվում է Միլվաքուլաքիստ պողոտայի վրա՝ Զոմհուրի պուշտալից ներքե:

Իրանում առկա են երեք Լուսավորչական թեմեր.

1. Նոր Զուղայի եւ Հնդկաստանի թեմ, որի կենտրոնատեղին Նոր Զուղայում է:

2. Թեհրանի եւ ջրջակա քաղաքների թեմ

3. Ատրպատականի թեմ

Թեհրանի թեմի մեջ են մտնում Թեհրան (ջրջակա գյուղերով), Անպալի, Ռաշտ, Մաշհադ, Վանաք եւ Ջերմանշահ քաղաքները: Այս թեմը կյանքի է կոչվել 1323 թ. (1944 թ.) սեպտեմբերին, մինչ այդ Իսֆահանի Նոր Զուղայի թեմի մաս էին կազմում: Սույն թվականին էջմիածին կաթողիկոսության կողմից Թեհրան ուղարկվեց վարդապետ Վահան Կոստանյանը, որը մի կարճ ժամանակից հետո (1324-ի (1945) հունվարից մինչեւ հունիս) որպես Իրանի եւ Հնդկաստանի թեմի առաջնորդ, Նոր Զուղա գործուղվեց եւ որին փոխարինեց առաջնորդ Ռուբեն Ռաբանյանը, սկսյալ (1324 թ. (1945 թ.) հունվարից մինչեւ 1327 թ. (1948 թ.) դեկտեմբերը): Բացի էջմիածնից հայոց կաթողիկոսի աթոռանիստ դարձավ Նաեւ Լիթանանի Անթիլիաս քաղաքը: Սկսած 1339 (1960) թվականից, երբ կապը էջմիածնի հետ խզվեց, թեմի առաջնորդները ուղարկվում են Անթիլիասի կաթողիկոսության կողմից: Հենց սույն թվականից Թեհրանի թեմի առաջնորդ է դարձել Արտակ Արքեպիսկոպոս Մանուկյանը:

Հարկ է հիշատակել, որ եկեղեցուն կից աշխատում է Նաեւ թեմական խորհուրդը, որի անդամները ընտրվում են ժողովրդի միջոցով: Ըստ օրենքի առաջնորդը եւս ընտրվում է

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԳԵՐՄԱՆԻԿ)

Սույն խորհրդի կողմից, որին հաստատում է կաթողիկոսը:

Թեմական խորհրդի 74 հոգվածից բաղկացած կանոնադրությունը մշակվեց 1314 (1935) թվականին (Իրանի արդարադատության նախարարության առաջարկով) եւ կաթողիկոսի հաստատմանը արժանացավ 1316 (1937) թվականի մայիսի 21-ին, որը եւ պարսկերեն թարգմանությամբ արդարադատության նախարարությանը ներկայացվեց:

Թեհրանի հայոց եկեղեցիները

Թեհրանի հնագույն եկեղեցին կառուցվել է 1147 (1768) թվականին: Ներկայիս Թեհրանի հայոց եկեղեցիները հետեւյալն են.

Սուրբ Աստվածածին եկեղեցին որը կառուցվել է 1317-1324 թթ. (1938-1945 թթ.) Միլվաքուլաքիստ պողոտայի վրա Զոմհուրի պողոտայից վերեւ:

Սուրբ Գեորգ եկեղեցի 1169-1174 թթ. (1790-1795 թթ.) Դարվապե Ղազվիում:

Սուրբ Թադեոս Բարդուղիմեոս եկեղեցի 1147 թ. (1768 թ.) վերակառուցվել 1199 թ. (1820 թ.) դարվապե Հապրաթե Արդուպալիում:

Սուրբ Թարգմանչաց եկեղեցի 1347 թ. (1968 թ.) Վահիդիեում:

Սուրբ Մինաս եկեղեցի 1231 թ. (1852 թ.) վերանորոգվել 1254 թ. (1875 թ.) Վանակում:

Սուրբ Հովհաննես մատուռ 1317 թ. (1938 թ.) Դուլաք հանգստարանում:

Սուրբ Սարգիս եկեղեցի 1343-1349 թթ. (1964-1970 թթ.) Զարմիսան Զանդ պողոտայի վրա:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի 1361 թ. (1982 թ.) Մաշիդիեում:

Ս. Ստեփաննոս մատուռ 1353 թ. (1974 թ.) Նոր Բուրաստանում:

Ս. Վարդանանց, եկեղեցի Հեջմաթիեում:

Կաթոլիկ հայերը Նույնպես Ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ եկեղեցի ունեն, որը հիմնադրվել է 1329-1333 թթ. (1950-54 թթ.):

Բողոքական հայերի եկեղեցին եւս հիմնվել է 1325 թ. (1946 թ.) Ս. Հովհաննես անունով:

Կրոնական մյուս դավանանքները, Նույնպես ունեն առանձին աղոթարաններ ու եկեղեցիներ:

Վ Ե Ր Ջ

«Թեհրանահայության պատմություն» հոգվածաշարում տեղ գտած վրիպումները

Համար	Էջ	Սյունակ	Պարբերություն	Տող	Միայ	Ճիշտ
56	10	Բ	2	12	Արամը Շահի Արասում	Արամը (կամ Շահի Արաս) Սեյեդ Խանդանում
56	10	Բ	2	9	Արամը (կամ Արովյան) Սեյեդ Խանդանում	Արամ (կամ Արովյան)
56	18	Բ			Ըստ հոգվածի խոստումին պետք է տպագրվեր հաշվական դպրոցների վիճակագրույցը	
					որը տեղի սղության պատճառով չի տպագրվել	
58	10	Ս	5	1	Թեհրանահայության	Իրանահայություն
59	10	Բ	1	1	Ալեքսանդր Անայան	Ալեքսանդր Արեյան
61	11	Ս	6	9	«Ջավահան»	«Ջավահայ»

Բացադրություն՝ թերթիս համար 59-ից սկսյալ հոգվածները պիտի համարակալվեն 7,8,9 եւ սույն համարը որ 10-րդ եւ վերջին բաժինն է: